

11.12.02թ
5406-09

1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

375015. Երևան 15. Գրիգոր Լուսավորչի 13

№ 2626-Ա

« 24 » դեկտեմբերի 2002 թ.

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2002Թ.
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԿԱՐԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵՆՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության և օտարման մրցութային ու աճուրդային հանձնաժողովի 2002թ. դեկտեմբերի 17-ին կայացած նիստի արձանագրությունները (հ.հ. 1-12) և հողամասերի վարձակալության մրցույթի ու աճուրդով վաճառքի մասին ամփոփ տեղեկանքը.

1. Հաստատել 2002թ. դեկտեմբերի 17-ին կայացած՝

1.1. հողամասերի վարձակալության /գնման նախապատվության իրավունքով/ մրցույթի արդյունքները և հաղթող ճանաչել սույն որոշման հ.հ. 1-5 հավելվածներում նշված քաղաքացիներին;

1.2. հողամասերի աճուրդով վաճառքի արդյունքները և հաղթող ճանաչել սույն որոշման հ.հ. 6-8 հավելվածներում նշված քաղաքացիներին;

1.3. հողամասերի վարձակալության մրցույթի արդյունքները և հաղթող ճանաչել սույն որոշման հ.հ. 9-10 հավելվածներում նշված քաղաքացիներին

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Բաբայանին.

2.1. Սահմանված ժամկետներում ապահովել հաղթող անձանց կողմից վարձակալության գնման նախապատվության իրավունքով սակարկությունների արդյունքում ձևավորված և աճուրդով գնված հողամասերի արժեքի մուծումը Երևանի քաղաքապետարանի հ/հ 900013211017 (Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունք):

2.2. Սույն որոշման 2.1 կետի կատարումն ապահովելուց հետո, միջնորդություններ հղել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչություններ՝ հողամասերի հատակագծերի տրման, օտարման և վարձակալության պայմանագրեր կնքելու մասին:

2.3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվետվության բաժնի միջոցով ապահովել մրցույթում և աճուրդում չհաղթած անձանց կողմից քաղաքապետարանի հ/հ 900013211017 մուծված նախավճարների վերադարձը (հավելված հ. 11):

2.4. Աշտարակի խճուղու սկզբնամասի ծախակողմյան /ծածկագիր Մ 02-256/ հողամասի համար հայտարարել կրկնամրցույթ, Շիրազի փողոցի հ.6 շենքին հարող տարածքի /ծածկագիր Ա 02-39/ հողամասի համար՝ կրկնաճուրդ:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ս.Կոտուլիկյանին, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Գևորգյանին՝ միջնորդություններ ստանալուց հետո, սահմանված ժամկետում և կարգով, ապահովել հաղթողներին հողամասերի հատակագծերով ու կնքել վարձակալության և օտարման պայմանագրեր:

4. Ընդունել ի գիտություն, որ.

4.1. Մրցույթում և աճուրդում հաղթած անձանց հողամասերում նպատակային նշանակության օբյեկտների նախագծման համար անհրաժեշտ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է և նախագիծը համաձայնեցվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից՝ հիմք ընդունելով ելակետային տվյալներով սահմանված չափանիշները և Երևանի քաղաքապետի 23.07.2001թ. հ.789 որոշմամբ սահմանված՝ քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից տրվելիք բնապահպանական պահանջներն ու սահմանափակումները՝ ըստ Երևանի քաղաքապետի 27.09.2001թ. հ.1165 որոշմամբ սահմանված կարգի:

4.2. Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա.Բաբայանի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Վարդապետյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Մ. Մուս...



ՆԱԶԱՐՅԱՆ